Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(հարկիրճ շարադրանք)

1. ՈԼՈՐՏԸ

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ոլորտը կարգավորվում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով: Նույն օրենքի համաձայն՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) կառավարման մարմինը, և իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հիմնական թիրախներն են.

- Ստեղծել և տարածել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվություն,
- Ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային բովանդակություն,
- Տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին:

Արդյունք. Բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային հեռուստատեսային և ռադիո հաղորդումների արտադրության և հեռարձակման ապահովում:

Հիմք. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք :

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից իրականացվում է 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» բյուջետային ծրագիրը, որի միջոցառումներն են.

- 11001 «Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ»,
- 11002 «Հեռուստատեսային ծառայություններ», որը իրականացվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11003 «Ռադիո ծառայություններ», որը իրականացվում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11005 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ», որը իրականացվում է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 12001 «Միջազգային կազմակերպություններին անդամակցություն»
- 31001 «Հանրային հեռուստառադիոընկերության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում», որը նախատեսվում է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումներ ձեռք բերելու համար,
- 32001 «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով» դրամաշնորհ, որը նախատեսվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման համար
- 32002 «Ներդրումներ շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով» դրամաշնորհ, որը նախատեսվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգման համար,

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2021-2023 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի քաղաքականության հիմք է հանդիսանում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին ամրագրված լիազորությունների իրականացումը:

2021-2023 թվականներին հեռուստառադիոհաղորդումների գերակա ուղղություններն են.

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար	Հիմնավորումներ
Տեղեկատվական, ճանաչողական, մանկական, կրթական, մշակութային և ժամանցային հեռուստատեսային բովանդակության ապահովում	Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-34 և 47 հոդվածների պահանջներով: Ծրագրի նպատակները անմիջականորեն կապված են ՀՀ Կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով:
Հանրային հեռուստաընկերության հաղորդումների բազմազանության ապահովում՝ ըստ հաղորդաշարերի քանակի	
Հանրային հեռուստաընկերության օրիգինալ հաղորդումների տեսակարար կշռի ավելացում	
Ինտերնետ հարթակներում առցանց հանրային հեռուստածրագրի բարձր դիտելիության ապահովում	
Հանրային ռադիոընկերության օրիգինալ հաղորդումների տեսակարար կշռի ավելացում	
Տեղեկատվական, ճանաչողական, մանկական, կրթական, մշակութային և ժամանցային ռադիո բովանդակության ապահովում	
Ինտերնետ հարթակներում առցանց ռադիոծրագրի բարձր դիտելիության ապահովում	
Հոգևոր-մշակութային հաղորդումների հեռարձակման ապահովում	

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներկայացնել ոլորտային քաղաքականության թիրախների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմին կողմից իրականցվող ընդհանուր ծախսերը (հայտերով ներկայացված)՝ բացված ըստ հիմնական ծրագրերի և ուղղությունների:

2021-2023 թվականների համար Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի միջոցառումների իրականացման համար կպահանջվի համապատասխանաբար՝

2021 թվականի համար՝ 7,021,054.8 հազար դրամ,
2022 թվականի համար՝ 9,018,001.5 հազար դրամ,
2023 թվականի համար՝ 9,273,897.7 հազար դրամ: